մէկ քանի անձինք, բայց յայտնի չէ թէ ինչ հրաման եղեր է իրենց։

Փունջ. Թիւ 379։

Հարաթ օրը իտալերէն տեսարակ մը հրատարակեցաւ, որ Գ-ղեր. Հասունի կողմէն 17 մայիս 1847 թուականաւ 'ի պատասխանի Բրօբականատայի Ս. Ժողովին ըրած քանի մը հարցմանց գրած մէկ նամակը կը պարունակէ։

Այն նամակին մէջ Գ-ղեր. Հասուն բաց 'ի ուրիշ խնդիրներ յուղելէ՝ կըսէ թէ ընդհանրապէս կը կարծուի որ Օսմանեան կայսրութիւնը քիչ ժամանակէն ուրիշ տէրութեանց մէջ պիտի բաժնուի, և Ռ. Պօլիս ու այն գաւառները՝ որ կաթոլիկ հայոց նախագահական աթոռին իշխանութեան ներքև են, Ռուսիոյ ձեռքը պիտի անցնին։ Ուստի յօդուտ կաթոլիկ կրօնին կառաջարկէ որ այն գաւառները իրենց համար մասնաւոր եպիսկոպոսներ ունենան նախագահական աթոռէն կարգեալ, որպէս զի Ռուսիոյ կառավարութեան հակահռոմէական միտմանց դէմ կենան։

Սակէ զատ՝ Գ-ղեր. Հասուն Ս. Ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրէ հայութեան ու ազգայնութեան ոգւոյն վրայ, որ ըստ իւր կարծեաց հռոմէական հաւատացելոց ապագային վրայ վախնալու պատճառներ կուտան։ Պ. Լիմնակաւոր եպիսկոպոսները, կըսէ, այս ոգւոյն մեքենայութեանց առաջքը կրնան առնուլ, և հաւատացեալները ողջամիտ վարդապետութեան և Հռոմայ Ս. Աթոռոյն հաւատարմութեան մէջ պահել։ Յետոյ Մխիթարեանները կ'ամբաստանէ որպէս թէ սոյն ոգւոյն կը ծառայեն։

Այս նամակը մեծ թշնամանք մ'է թէ կայսերական կառավարութեան և թէ դարուս ոգւոյն ու սկզբանց. ուստի տարակոյս չկայ որ հեղինակը՝ եթէ ստուգիւ Գ-ղեր. Հասունեանն է, ծանր պատասխանատուութիւն կը հրաւիրէ իր վրայ։

Մասիս. Թիւ 402։

Կ'լսենք թէ՝ Հռոմէական ազգայնոց խնդրոյն կարգադրութեան համար, Բարձր. Մեծ եպարքոսին նախագահութեամբը ժողով մը պիտի ըլլայ, ուր պիտի գտնուին երկու կուսակցութեանց կողմանէ 6 ական անձինք։

Այս արդիւնքն ունեցած ըլլալու է, մօտերս հռոմէական ազգայնոց մեծ մասին կողմանէ բարձր. Մեծ եպարքոսին տրուած աղերսագիրն՝ ընդդէմ Հասունեան էֆէնտիի։

Յուսալի է որ այս ժողովին շնորհիւ յիշեալ ազգայնոց օրինաւոր խնդիրները կը կարգադրուին, և Հասունեան էֆէնտին՝ որուն դէմ ժողովրդեան խիստ մեծագոյն մասը դժգոհ կերևայ, կստիպուի մնաս բարեաւ ըսել պատրիարքական աթոռին։

Ժողովրդեան Գ-լուխ մը ուշ կամ կանուխ կիյնայ կկործանի, երբ ժողովրդեան հաճութեամբը բարձրացած չէ, կամ՝ ժողովրդեան համակրութիւնը հեռի է իրմէ։

Փունջ. Թիւ 389։

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Աղէքսանդրապոլու Հայոց Ուսումնարանի, ընթերցարանի եւ բարեգործական նպատակաւ կազմուած ընկերութեանց վերայ։

Հասարակական գործոց նկատմամբ՝ մանաւանդ մասաւոր և բարոյական զարգացմանց վերաբերութեամբ ճշմարիտ և օգտակարը խօսիլը սրբազան պարտաւորու-

թիւն կ'համարուի նոցա, որոնք փոքր 'ի շատէ կարողութիւն կղզան այդպիսի պարտաւորութիւն ճանաչելուն և կատարելուն մէջ. ուստի և ես այս իսկ պարտաւորութենից ստիպուած՝ հարկ կ'համարիմ վերոյգրեալ առարկայից վերաբերութեամբ հետեւեալ տեղեկութիւններն գրելով՝ կարդալ 'ի լուր սիրելի Ազգայնոց՝ միջոցաւ պատուական ամսագրոյդ Արարատայ, որ քաջ համոզուած եմ, թէ՝ պատրաստ է այսպիսի հասարակաօգուտ տեղեկութեանց քարոզ հանդիսանալ իւր հարազատածին որդւոցը թէ նոցա բարի օրինակներ տալու՝ թէ կարեւոր խրատներ աւանդելու, և թէ աղգօգուտ ձեռնարկութեանց տապարիզի մէջ հետ ըզհետէ յառաջ երթալու նկատմամբ խրախուսելու համար, որ միակ նուիրական պարտքն է իւրաքանչիւր հրատարակչաւոր պարբերութեանց։

Նախ և յառաջ խօսինք համառօտակի Ազգային Հոգեւոր Ուսումնարանի վերայ։ այդ ուսումնարանը բացուած է 1839 թուականին հանգուցեալ Նիկողայոս Եպիսկոպոսի յաջողութեան ժամանակից. բայց շարունակ միակերպ բարեկարգութեան մէջ չէ գտնուած, այլ երբէք վիճակի մէջ տատանելով՝ երբեմն ունեցել է փոքր 'ի շատէ դէթ Հայերենի նկատմամբ իւր պտղաբերութիւնը, և երբեմն գրէթէ մնացել է բոլորովին ամլութեան մէջ. ուստի բարերաղդ են եղել այն աշակերտները՝ որոնք ուսումնարանի յաջողակ ժամանակներին հանդիպելով՝ կարելոյն չափ քաղել են իւրեանց համար ուսման պտուղ և կ'գործադրեն կեանքի մէջ հարկաւորեալ միջոցներում։ Մենք ուսումնարանի անցեալը քննելով՝ դոյա զանազան վիճակների պատճառներն գտնելու, և ընդարձակ խօսելու մտադրութիւն չունինք. որովհետև դորանից մեկ իրական օգուտ քաղելու յոյս չի երևիր մէջ տեղը. մեր միտքն է միայն վերոյգրեալ ծանօթութիւնը տալուց յետոյ ներկային վերաբերութեամբ խօսիլ, թէ՝ այս տարի երկու տնով յառաջ հին հոգաբարձուց վերայ յաւելացան այլ ևս բանագէտ հինգ անձինք, որոնք միասին իւրեանց առաջին ընկերակցաց հետ մեր ուսումնասէր և աղդասէր Վ. Հայրապետ Կաթուղիկոսի սուրբ Կոնդակաւն իւրեանց նուիրական պաշտօնների մէջ հաստատուելուց յետոյ, այժմ ըակըսել են բարկոյս ջանացողութեամբ աշխատիլ ուսումնարանի ներքին և արտաքին վիճակը բարւոքելու, որոյ մէջ առ այժմ հարկաւորեալ ամենակարեւոր շինութիւններն աւարտելու վերայ են. միւս բարեկարգութեանց մասին էլ պէտք եղած հոգացողութիւններն շուտով կիսուին։ Երանի է թէ սոցա բարենպատակ և աղգօգուտ ջանացողութեան դէմ ուրիշ հակառակ հողմեր չ'փչեն, և անյաղթելի խոչընդոտներ դործին խափան չ'տան. և այսպէս պտակուելով բարեջան հոգաբարձութեան աղգաշահ դիտաւորութիւնը ուսումնարանի յառաջադիմութեան նկատմամբ՝ պտակուի և մեր Աստուածընտիր Հայրապետի սուրբ փափաքը, զոր ունի իւր սիրելի հօտի ընդհանրութեանն՝ Աստուածահաճոյ և կենդանաւորդուտ ուսմամբ լուսաւորուելու մասին, պըտակուին նաև դոյն ուսումնարանի մէջ պաղատող ուսումնածարաւ աշակերտաց և նոցա ծնողաց ու քաղաքիս բոլոր Հայ հասարակութեան ուսումնասիրական ջերմ ցանկութիւններն և հոգաբարձութեան աղգասիրական ջանից վերայ ունեցած ակնկալութիւններն։

Հիմա խօսինք ընթերցարանի վերայ։ 1862 թուականին Մոսկէս Արք Եպիսկոպոսի փոխանորդութեան օրոմն՝ որ այժմ վիճակաւոր Առաջնորդ է Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց, առաջին անգամ քաղաքիս մէջ մեկ թանգարան հաստատելու փորձ եղաւ, բայց յաջողութիւն չ'գտաւ.

փոքր ինչ յետոյ մի քանի ուսումնասէր երիտասարդների աշխատութեամբ այդ փորձը կրկնուելով՝ թէև յաջողեցաւ, և տարեկան հինգ հինգ մանէթ սալու բաժանորդագրութեամբ՝ քսան և հինգ անձինքներից կազմուեցաւ մէկ ընթերցասիրական ընկերութիւն, և բացուեցաւ ընթերցարան տեղական հոգևոր ուսումնարանի մօտ. բայց դժբաղդաբար կարճատև եղաւ գոյա կեանքը. որովհետև առաջին տարին բաւական ջերմութեամբ շարունակուեցաւ, և բաց ի ընկերութեան անդամների ընծայած հարկաւորեալ զանազան կարասիքներից և Ֆայ և Ռուս լեզուաց լրագրներից, և սակաւ ինչ բացառութեամբ բաժանորդագրամներն վճարելուց՝ նոյն ընկերութեան առաջաւորաց հրաւիրանօք քաղաքիս մեծայարգի երևելիներից մի քանիսը համեցան միանուագ դրամական օժանդակութիւն ստորագրել, որոց մեծ մասը կանխիկ հատուցել են, ինչպէս որ գրուած է ընթերցարանի մոտից տումարի մէջ. երկրորդ տարին էլ դարձեալ շարունակուեցաւ, բայց առաջին տարուայ համեմատութեամբ սակաւ ինչ սառն կերպով. իսկ երրորդ տարին այնքան սակաւացաւ ստորագրող անդամոց թիւը, և թոյլ եղանակաւ շարունակուեցաւ՝ որ տարուայ կէսն հազիւ հասած՝ բոլորովին դադարեցաւ առանց կանոնաւոր հաշուառութեան. ուստի և նոյն ընկերութեան գրամից կարծեօք մի քանի մանէթ էլ մնաց ընթերցարանի կառավարչի վերայ և տակաւին կմնայ։ Մանք կարծեցին, թէ այս դադարման պատճառն եղաւ նոյն միջոցին Թատրոն սարքելու ձեռնարկութիւնը. որովհետև ընթերցարանի անդամներից ոմանք զբաղուելով Թատրոնական գործոց հոգացողութեամբ՝ դադարեցան ընթերցարանի հոգատարութիւնից. բայց էական պատճառն դա չէ՝ այլ ընկերութեան անդամոց մեծ մասի սառնութիւնը և անհոգացողութիւնը իւրեանց ձեռնարկութիւնը յարատևութեան մէջ պահպանելու նկատմամբ. որովհետև մեր մէջ կարծես առհասարակ սովորական է՝ որ մի որ և իցէ հասարակաօգուտ գործ մեծ եռանդով կրակուսի, բայց հետ զհետէ եռանդը բաղմապատկելով գործին լաւ ուղղութիւն տալու և կանոնաւորելու փոխանակ՝ կակի նուազել և հետևաբար գործն էլ կ'հանդիպի իսպառ դադարուելու սխուր բաղդին. ինչպէս որ փոքր ինչ ժամանակ տևելուց յետոյ Թատրոնն էլ հանդիպեցաւ, որին թէև ուրիշ պատճառ էլ կար*). Թէ այս և թէ այն ընթերցարանն դադարելուց յետոյ դարձաւ խորհրդարան ուսումնարանի հոգաբարձուացն. այդ միջոցին մի քանի գրքեր և լրագրներ թէ անդամներից և թէ ուրիշ երթևեկներից ոմանք ժամանակաւոր ընթերցանութեան պատճառաւ տանելով՝ այլ ևս չեն վերադարձուցեր՝ դուցէ ընթերցարանի անխնամութիւն դրութեան մէջ մնալու առթիւ. սոյնպէս և ուրիշ կարասիքներից թէ կոտրուելով, և թէ կորչելով մի քանիսն պակասել էին։

Ընթերցարանի այսպիսի ցաւալի դրութիւնը դարձոյց նորա նախկին անդամոց մի քանիսի ուշադրութիւնը դէպի այդ առարկայն, որոնք կասկածելով՝ թէ մի դուցէ մնացեալ իրեղէնքն էլ հետզհետէ կորչին և անհետանան, գտնուած գրքերն և լրագրները ցուցակագրելով՝ հաւաքեցին ուսում-

(*) Թատրոնը թէ որ կանոնաւոր լինի, իրաւի հասարակաց բարուց կրթութեան եւ նոցա պատմական հրահանգիչ անցեալ ծանօթացնելու մասամբ ունի իւր մեծ նշանակութիւնը, ինչպէս որ փորձով տեսնուած է օտար երկիրներու մէջ. սակայն մեր քաղաքի նման նոր զարգացող ըստ մեծի մասին անվանաւաշահ, եւ ժողովուրդը Թատրոնական ճաշակին դեռ չպատրաստուած քաղաքների մէջ շարունակ Թատրոն պահելը խիստ մեծ դժուարութիւն է, եւ գրեթէ անկարելի. ուստի եւ այդ պատճառաւ մեր Թատրոնի կեանքն էլ կարճատեւ եղաւ։

նարանի պահարանի մէջ, և առանձին հրակոզութեամբ փակի նկրքոյ պահպանելուց զկնի՝ աշխատեցան զանել կողածներից մի քանիսը, թէև խիստ փոքր մասը գտնուեցաւ. յետ որոյ գարձեալ կազմուեցաւ Ընդերցաւորական ընկերութիւն, բայց կարծելով թէ դուցէ ամանոյ անդամոց գժուարութիւն լինի տարեկան հնգական մանէթ բաժանորդագրամ վճարելը, կարգադրուեցաւ երեք կարգի տուրք. այսէ՝ տարեկան 4 մ. 2 մ. և 1 մանէթ. և առաջարկուեցաւ որ իւրաքանչիւր անդամ իւր կարեաց համաձայն իւրեան կարգ վերառնի. միայն թէ ընթերցանութեան նկատմամբ ամէն մէկի իրաւունքն համահաւասար էր ինչպէս որ կ'փայլէ բարեմիտ ընկերականութեան, և մէկ գերդաստանի մեծ և փոքր իրերասէր եղբարց. այս ընկերութիւնը յուսալի էր թէ տևողական լինէր, բայց միայն երկու անակնկալ արգելութիւններ ընդառաջելով մէկ տարի շարունակուելուց յետոյ՝ սորան էլ պատճառեցաւ տառնութիւն և հարկադրուել էր խապառ դադարելու, երբ ուսումնարանի որբ և չքաւոր աշակերտաց դասագրքերի կարօտութիւնը մի երկու անձանց աշխատութեամբ ծնաւ մի նոր ընկերութիւն՝ հարիւր անձինքներէ բաղկացեալ շաբաթական երեքական կոպէկ տուրքով *), որը ուսումնարանի ծառայի ձեռքով կ'ժողովուի, և ընկերական հաճութեամբ նորա անդամներից ընտրուած գանձապետի մօտ պահ կ'տրուի. այս ընկերութիւնը իւր բարեհոգ նպատակին յօժանդակութեան նկատմամբ դթասիրտ լսողաց կարեկցութիւնն ևս շարժելու առթիւ Որբոխնամ անունը 'կկրէ իւր վերայ. ունի կառավարիչ մանաժողով հինգ անձինքներէ բաղկացեալ՝ և մատենապահ, որոց պարտականութիւններն ընկերութեան կանոնագրութեան մէջ առանձին յօդուածներով որոշված են. այս ընկերութեան դրամով և հաճութեամբ կառավարիչ մանաժողովոյն բերել կ'տրուի դասագրքեր, և մատենապահի ձեռամբ կ'վաճառուի կարող աշակերտաց վրայ փոքր ինչ օգուտով. իսկ որբոցն և չքաւորաց ձրի կ'տրուի այն պայմանաւ՝ որ աւարտելուց յետոյ կրկին վերադարձնեն ուսումնարանի մատենադարանին, որպէս զի նորանցով ուրիշներն էլ օգտուին. և այս երկու կարգին էլ միանգամայն դիւրութիւն կ'պատճառէ. վասն զի հարկաւորեալ դասագրքեր գնելու կարող աշակերտներն էլ շատ անդամ վաճառողների մօտ չէին կարող ճարել, և եթէ ճարէին, սխալուած էին աւելի թանգ գնով առնուլ. ուսումնարանի այս ամենակարևոր պէտքն հոգալուց զկնի մնացեալ փողի մէկ մասը տոկոսով կ'տրուի ընկերութեան անդամներից մէկ յուսալի անձի՝ հետզհետէ այդ ազգախնամ նպատակի համար մէկ նշանաւոր գումար կազմելու դիտաւորութեամբ. և մէկ մասովն էլ լրագրներ կ'բերուին յառաջադէմ աշակերտաց և ընկերութեան ընթերցասէր անդամոց կարդալու համար. ու այդ իսկ նպատակաւ մատենադարանի մէջ մշտանջենաւոր մնալու համար կ'գնուին ընտիր ընտիր մատեաններ, որով հետզհետէ կարելի է մատենադարանը զարդացնելով ուսում-

(*) Այս ընկերութեան տուրքը թէև փոքրիկ եւ աննշան է քանակութեան կողմանէ, դիտաւորապէս այն նպատակաւ, որ տղոցների աչքին բան չերևայ, սակայն սկզբունքի նկատմամբ խիստ շատ մեծ է եւ նշանաւոր. վասն զի մեր հասարակութիւնները ըստ մեծի մասին սովոր չեն իրանց հասարակական գործերը իրեանց աշխատութեամբն եւ սակաւիկ ծնունդութեամբն յառաջ տանիլ. այլ միշտ յոյսերը կարող անմանց վերայ դնելով իւրեանք անփոյթ կմնանուստի եւ գործերը յառաջ չեն գնալ. աւելի լաւ է որ հարիւր մարդ մի մի կոպէկ տալով մի մանէթի հասարակական գործը կատարուի, քան թէ մի մարդ մի մանէթ տալով. որովհետեւ առաջին ճանապարհը աւելի հաստատուն է եւ տեւողական քան թէ երկրորդը:

նարանի զարգացմանը օգնել ընթերցասէր Հայ երիտասարդաց ընթերցասիրական փափագներն գոհ անել, և միանգամայն ապագայ սերնդոց շնորհակալութեանը արժանանալ մի այդպիսի ամենակարևոր ժառանգութիւն նոցա թողնելու պատճառաւ. այս Ուրբաթեան ընկերութեան հաստատելուց փոքր ինչ ժամանակ յետոյ տեսնելով թէ՝ առանձին ընթերցարան պահելը զանազան պիտոյից համար մի առանձին դժուարութիւն կ'պատճառէ. ուստի հարկաւոր դատուեցաւ որ երկուքը միանան, և ընկերութիւնը ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ անուն առնելով իւր վերայ՝ աշխատի իւր անդամոց թիւն բազմացնել, և ընթերցանութեան ցանկացողները կիւրակի օրերը դան մատենադարանի սենեակն և այնտեղ կարդան:

Այս ընկերութիւնն սկսուած էր անցեալ 1868 ամի յուլիս ամսոյ մէկից. ուստի այս տարի առաջին տարեշրջանը լրանալուն մօտ համաձայն քանոնարարդ յօդուածոյ ընկերական կանոնադրութեանն՝ հրաւէր գրուեցաւ բոլոր անդամոց տարեկան հաշիւն ներկայացնելու առթիւ. յունիսի 30ին թէև բոլոր անդամոց քառորդ մասը հաղիւ էր ժողովուած ուսումնարանի մէջ, սակայն հաշիւը յետ քցել չէր կարելի. փոխն զի քաղաքիս մէջ մի այդպիսի նպատակի համար ժողով կազմելու ժամանակ՝ որքան որ շատ էլ լինի ժողովելն անդամոց թիւը, հաղիւ կ'պատահի որ անդամներն մեծ մասը բարեպատեհ ժամանակ ճարեն ժողովին ներկայ լինելու. ուստի ներկայ եղածներովը հաշիւը ներկայացաւ, որից երևեցաւ որ տարեկան շաբաթական տուրքերից*) գոյացել է 114 մանէթ 41 կոպէկ: Յուսալիանձանց վերայ այդ տուրքից մնացել էր ապառիկ 21 մանէթ, որից ստացէն ժողովուածէ 7 մանէթ 14 կոպէկ: Պ. Պալասանեանցից ընծայած չորս հատ առաջին հատոր քերականութեան դիւն 4 մանէթ, վաճառած գրքերից ստացած է օգուտ 10 մանէթ 49 կոպէկ և կէս, գումարն 136 մանէթ 4 կոպէկ և կէս: Այս գումարից տարեկան ծախս է եղել լրագրի՝ շաբաթականներն հաւաքելու համար ուսումնարանի ծառային վարձ տալու, գրքեր կազմելու, և ուրիշ մաներ հարկաւորելեաց համար 13 մանէթ 43 կոպէկ: Որբ և չքաւոր աշակերտաց դասագրքեր տրուած են ընդ ամէն 9 մանէթ 64 կոպէկ: Մատենադարանին մէջ ընթերցանութեան համար մնալու գրքեր գնուածէ 9 մանէթ 70 կոպէկ. գումարն է 32 մանէթ 77 կոպէկ: Այս բոլոր ծախսն դուրս գալով վերոգրեալ եկամտից՝ առ մէկն յուլիսի ներկայ ամի մնաց 103 մ. 27 կոպէկ և կէս. որից վաթսուն մանէթն պատրաստի դրամ

(*) Շաբաթական տուրքերից եթէ լրիւ ժողովուէին բոլոր անդամներից, համեմատութեամբ հարիւր անձանց թուոյն պէտք է գոյանար տարեկան 156 մանէթի գումար. բայց այդրան չգոյանալու պատճառն այն էր որ անդամներից մի երկուսը դեռ չվճարած իւրեանց տուրքերը, վախճանել էին. մի քանիսն էլ բաղաքիցս անընդհատ բացակայութեան պատճառաւ չէին վճարել. եւ ոմանք էլ նայելով թէ տուրքի քանակութիւնը այնքան թեթեւ է եւ աննշան, որ իւրեանց տարեկան ծախսուց գումարի մէջ մէկ փոքրիկ կետ համարուելով, երբէք իւրեանց մի առանձին ծանրութիւն պատճառելու չէ. դարձեալ մի քանի շաբաթական տուրքս յետոյ դադարեցուցել էին տուրքի շարունակութիւնը. այդ անձինքներից կը համարուի եւ մեր բաղաքացի պարոնը, որ Մէջ-Հայոց Լրագրի քան եւ եօթներորդ համարի մէջ հրատարակեալ տուած յօդուածովը իւրեան ճշմարտախօս ազգասիրաց կարգին դասելու կը վստահանայ. եւ իւր թղթակիցների հետ բոլոր բաղաքացւոց ուղղութեան ճանապարհ բարոգելու կը յանդգնի, համարելով նոցա պարզամիտներ, այսինքն յիմարներ: Դա էլ թէեւ այս ընկերութեան կարգի մէջ ստորագրած է, բայց երկու շաբաթական միայն վճարած է, դուցէ փող չունենալու պատճառաւ, թէեւ իւր անձնական աւելորդ պահանջը լրացնելու անձեռնհաս չէ երեւում:

լինելով տրուեցաւ տոկոսով. Մնացեալն էլ վաճառելի դրեանք և աշակերտաց վաճառուած գրքերից մնացորդ ապառիկ, որոց մասին կարդացուեցաւ որ հետզհետէ ժողովուելով, և գրքերն վաճառելով մատենապահի ձեռամբ յանձնուին փոխարինն Գանձապետին, և պէտք եղած միջոցներում գործադրուին հաճութեամբ մատենաժողովոյն մինչև ցկրկին հաշուառեսութիւն։

Հաշիւը վերջանալուց յետոյ՝ ընկերութեան կառավարիչ մատենաժողովոյ կողմանէ կարդացուեցաւ մէկ համառօտ հրաւիրագիր, որոյ մէջ ընկերական սկզբունքի նկատմամբ մարդկային յառաջադիմութեան առթիւ ունեցած նշանաւոր կետերի վերայ խօսելուց յետոյ՝ հրաւիրուած էին ընկերութեան անդամներն երկրորդ տարուայ շարունակութեան համար ստորագրութեան յօժարութիւն տալու. ուստի հրաւիրագիրը աւարտելուց զկնի ներկայ գտնուողները հաշուոյ ճշտութեան նկատմամբ արդէն համոզուած լինելով՝ որ իւրեանց տուածները անկորուստ կ՝գործադրուին ըստ նպատակին, ուրախութեամբ ստորագրեցին իւրեանց յօժարութեան մասին. բայց որովհետև միւս բացակայ անդամներն էլ պէտք էր որ հաշիւն իմանային և հրաւիրուէին կրկին ստորագրութեան. ուստի ընկերութեան կազմութեան մասին առաջին աշխատաւորաց ձեռքով հաշուեթուղթը նոցա էլ ներկայացուցուաւ կրպակէ կրպակ մանգալով, որոնցից մեծ մասը յօժարութեամբ ստորագրեցին իւրեանց հաճութեան մասին. միայն ճշմարտախօսութիւնից ստիպուած չէ կարելի լռել թէ՝ մի քանիսներ՝ որոնք բաւական կարողութեան տէր կարգիցն էին, չկամեցան այլևս շարունակել՝ զուցէ անանկանալու երկիւղից. ահա դեռևս այսպիսի անձինք էլ կ՝գտնուին լուսաւորութեան կարիքներ ունեցող մի այսպիսի ժամանակի մէջ, որոնցից մեծ մասը տեղն եկածին պէս ազգային բարեկարգութեանց վերայ լոկ խօսքով երկար ու բարակ քարոզութիւն անելուց էլ ձեռք չեն քաշիլ։ բայց և այնպէս սոյն ընկերութեան բաղմաթիւ մասի վերայ մեծայոյս ենք, թէ ընթերցարանի վերոյիշեալ առաջին ընկերութեանց անցարատեւութեան փորձը՝ այսինքն սիրոյ և ջանացողութեան պակասութիւնն՝ իւրեանց խրատ համարելով (որոյ պատճառաւ էլ հարկ համարեցի ընդարձակ հանդամանօք գրել նոցա վերաբերութեամբ), կաշխատին անխափան շարունակել դէթ մի քանի տարի անընդհատաբար, որից միայն կարելի կ՝լինի նշանաւոր օգուտ քաղել ընկերութեանս նպատակի իրագործուելու վերաբերութեամբ։

Վաղաքիս մէջ Ամենայն Հայոց անուամբ մի ընկերութիւն ևս կայ քանի տարուց ըսկսեալ, որոյ անդամներն թեպէտ փոքրաթիւ են, սակայն հաստատուն սիրով շաղկապուած՝ կաշխատին ընկերութեան օգտի համար ամենայն հաւատարմութեամբ. ունին այժմ մինչև երեք հազար մանեթի գումար, որը արդիւնաւորել են սակաւիկ մայր դրամով, և այժմ կ՝գործադրեն իւրեանց ընկերական կրպակի մէջ առևտրականութեամբ թէ յապրդայ օգուտ իւրեանց և ժառանգացն, և թէ բարեգործական առարկայից մասնաւորապէս նպաստելու դիտաւորութեամբ, որպէս և այս քանի տարիներս առանձին առանձին բարեգործութիւններ արել են թէ եկեղեցաշինութեան տուրք տալով, թէ սուրբ տաճարաց պայծառութեանը նու իրամատոյց լինելով, և թէ մի քանի արբանակ ու խղճալի աղքատներ շահելով (երանի թէ ուսումնարանաց նպաստելու պարտ-

քրն էլ չմոռնային*). ընկերութեան ծախսով մի երկու տեսակ լրագրներ կ'ստանան կիւրակի օրերն կարդալու համար, ու տընտեսական կառավարութեան մասին չափաւորութեան և խնայողութեան նկատմամբ ունին ընկերական պայմաններ, որոնցից դուրս եկողները կ'պարտաւորուին գանձանակին տուգանք տալ. իւրաքանչիւր ընկեր պարտաւորուած է, որ իւր տան հարկաւորեալ իրեղէնքն թէ որ ընկերական կրպակին մէջ կ'գտնուին, այնտեղից գնէ՝ և ոչ ուրիշ տեղից. ահա՜ նախանձելի ընկերո՜ւթիւն:

Վերոյգրեալ ընկերութիւններից զատ այս տարի մի քանի ամսով յառաջ՝ մի քանի պատանիներ ուսումնասիրական հոգւով վառուած իւրեանց գործունէութիւնը ցոյց տալու նպատակաւ՝ ձեռնարկեցին մի նոր ընկերութիւն ևս կազմել շաբաթական հինգ հինգ կոպէկ տուրքով. այս ընկերութիւնը թէպէտ առ այժմ աննպատակ մականունը կ'կրէ իւր վերայ՝ որպէս թէ ապագայ ժամանակի պահանջը ինչ ապրուստ պէտք որ յառաջ բերեց, նոյն պէտքի համար գործադրուի ընկերութեան դումարած դրամը, և այսպէս ստանայ իւր յատկական անունը. սակայն իւր սկզբի ձեռնարկած գործքից երևեցաւ՝ որ ըստ մեծի մասին համանպատակ է վերոյիշեալ Ուրբանոմ ընկերութիւնը: Նշանի թէ՝ ինչպէս որ սոցա գլխաւոր աշխատողներին առաջարկուեցաւ, մեր ազգի պատմութեան մէջ յաճախակի յիշատակուած բաժանման փնտռտութիւն դէպքերից խրատ առնելով՝ Ուրբանոմ ընկերութեան հետ միանային պահելով և իւրեանց առանձին մնանաւոր նպատակը:

Մ. Վարժապետ Արքեպիսկոպոս:

Ի 20-ն Օգոստոսի 1869 ամի
ՅԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Շարունակութիւն (*)

ՆԱԽԱԴԻՏԵԼԻՔ ՄՏՔԻ ՄԱՍԻՆ

Ա.

Մարդուս հանճարը իւր սկզբնական գիւտերի հետ ի միասին հնարել է և գիր: Այդ գիրը երկու առաւել մեծ պաշտօն է կատարում մարդկային մտաւոր զարգացման ասպարիզումը — անցեալից հաշիւ է ստանում և ապագային հաշիւ տալիս: Նրթէ փորձերն են, որ սնունդ են դառնում մեր մտքի զարգացման համար, և գիրն է, որ մեր նախորդների փորձերը կենդանացրելով տալիս է մեզ, ապա ուրեմն առանց գրի մենք կարողանալու չէինք մեր նախնեաց մտաւոր ժառանգութիւնը ստանալ, և այդ չստանալով՝ պիտի յաւիտեան ժամանակաց միակերպ դրութեան, այն է՝ վայրենութեան մէջ մընային: Խօսք չկայ ուրեմն, որ մարդուս բանականութեանը վայել գիւտերից ամենակարևորագոյնը գիրն է: Սակայն գիտենալ արժան է, որ մարդու ստեղծ մի ամենահար-

*) Այս մասին խմբագրութիւնս ևս կը փութայ յորդոր կարդալ յիշեալ Աբրոյ Սէրոյ Ընկերութեան բարենպատակ անդամոց, որպէս զի բարեհաճին եւ սրբազան պարտաւորութիւն համարին ինքեանց առաւելապէս Ուսումնարանաց զարգացմանց եւ արդիւնաւէտ բարգաւաճմանց նպաստելու ամենայն ջանքով ըստ չափու Ազգասիրութեանց իւրեանց:

Ծան. խմբ.

(*) Տես Թիւ Ա. եւ Բ. 1869 ամի: